

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՆՈՐ ԳՊՐՈՑԻ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնա-
լու, որ ամսիս 25-ին, նոր կիրակի օրը, Վանքի մայր-եկեղեցում կատարվելու է դպրոցի
բարերար Յ Ո Վ Ս Է Փ Է Ֆ Է Ն Դ Ե Ա Ն Ց Ի հոգեհանգիստը:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Անհրաժեշտ կարելի.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Պատկերահանդէս. Քաղաքական մեղե-
ներ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Զիւռն-
չիւրի դաւաւից. Նամակ Խմբագրութեան. Նա-
մակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ
Մոսկուայից.

ԱՆՀՐԱՅԵՏ ԿԱՐԻՔ

Մեր թեմական դպրոցներում սկսվել է
հարցաքննութիւնների շրջանը, որի լրա-
նալուց յետոյ կը վերջանայ ուսումնական
տարին և կարելի կը զգացվի պատրաս-
տութիւններ տեսնելու հետեւեալ ուսումնա-
կան տարվայ համար: Իսկապէս շատ լուրջ
գործ կայ գրված այդ դպրոցների առաջ:
Ներսիսեան դպրոցում դեռ անցեալ տա-
րի լրացել է ներկայ հոգաբարձութեան
ընտանեայ գործադրութեան ժամանա-
կամիջոցը և վերջին հիւսիսորդ տարին
հոգաբարձութիւնը մնաց իր պաշտօնում
Վեհափառի առաջարկութեամբ: Սակայն
հարցը դրանով չէ լուծվել, այլ միայն
յետաձգվել է և ընտրութիւնների կա-
րեւորութիւնը օր օրի վրա զգալի է
դառնում ոչ միայն այն պատճառով,
որ հին հոգաբարձութիւնը պէտք է
տեղի ապա նորընտր հոգաբարձութեան,
այլ և այն պատճառով, որ հոգա-
բարձութեան կազմը անկատար է. տաս-
ներկու հոգաբարձուներից և չորս փո-
խարդիներից մնացել են ընդամենը
եօթե հոգի, որոնք ֆիզիքապէս ան-
կարող են ամեն անգամ ներկայ լինել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱՍԻՐԱԿԱՆ ՄՈՍԿՎԱՅԻՑ

XI

Ն շ ա ն ա լ ո Ր հ ա թ ի լ ւ ա մ ե ա կ

Այսօր Ռուսաստանը պատրաստվում է մի
փայլուն ու նուիրական տոնախմբութեան, որի
նմանը դեռ չէ տեսնված ուսու ազգի կեանքում
և որն առաջին ու եզակի երևոյթը պէտք է
հանդիսանայ ուսական մասուր դարգացման և
առաջնադասութեան պատմութեան մէջ:
Առաջիկայ մայիսի 26-ին, ինչպէս յայտնի է,
տօնվելու է մեծահայալ ուսու բանաստեղծ
Պուշկինի ծննդեան հարիւրամեակը: Թէ ի՞նչ է
ինչ է Պուշկինը իր ազգի համար—այս ցոյց է
տալիս այն ընդհանուր ոգևորութիւնը, այն
միահամուռ շարժումը, որ այսօր նկատվում է
լայնածաւալ Ռուսաստանի բոլոր անկիւններում,
բազմաթիւն ժողովրդի բազմազան խաւերում:
Սրժանավայել փառքով և ներքին շուրջ տօնել
մայիսի 26-ը, հիացման և երկրպագութեան
զգացմունքով արձանագրել ուսական բանա-
բի այդ յաղթանակը ազգային մտաւոր կեանքի
պատմութեան մէջ, կանգնել Պուշկինի անուան
բազմաթիւ հանրօգուտ գործերի մի նոր հոյա-
կապ արձան, մատչելի դարձնել Պուշկինի ա-
նուան հոյն իսկ անգրագէտ գիւղացու—անա-
ինչ է խորհում, ինչպիսի է զբաղված և ինչին է
ձգտում ամբողջ մտածող Ռուսիան և ուսական
մասուր ներկայումս: Մամուլ ու գրականու-
թիւն, գեղարուեստական ու երաժշտական աշ-
խարհներ, դպրոց ու համալսարան, գիտնական

հերթական ժողովներին: Երեւանի և Շու-
շու դպրոցները չեն կարողացել մինչև
այժմ բարեկարգութիւն մտցնել դպրո-
ցական գործադրութեան մէջ և կազ-
մակերպել բաւարար կերպով մանկավար-
ժական մասը: Այդ դպրոցներում դեռ
շարունակվում է մի անբնական զրու-
թիւն. հոգաբարձութեան, տեսչի, ու-
սուցչական մարմնի և հոգեւոր իշխանու-
թեան մէջ չէ հաստատվել այն կանոնա-
ւորութիւնը, որ թելադրում է վաղուց
մշակված դպրոցական կանոնադրութիւնը:
Կա թէև շատ լուրջ, բայց պարզ մի
հարց է, որ սակայն խճճվում է միայն
այն պատճառով, որ մարդիկ չեն ցան-
կանում հետեւել սահմանված կանոններին,
և առաջին առնել ամեն տեսակ անկար-
գութեան և կամայականութեան: Այս օր
չէ կարող պահանջել, որ մի անգամ սրբ-
բարձրված կանոնները մնան անխախտ
և չեն թարկվեն նոր փոփոխութիւնների: Ոչ,
դա սխալ է քննասիրող հայեացք կը լինէր
ամեն մի կենսական գործ պէտք է բա-
րեփոխվի ժամանակակից խելացի պա-
հանջների ազդեցութեան տակ. բայց
քանի որ չէ փոխված հին կանոնադրու-
թիւնը, նա պէտք է ղեկավար հանդի-
սանայ մինչև նորի մշակվել և հաստա-
վել: Մանաւանդ ընդունել է այստեղ մի
հանգամանք, որ փոփոխութիւններ մշո-
ցողները ամենեւին այն մարդիկ չեն, ո-
րոնք ձգտում են առաջադիմութիւն մշո-
ցել վարչական կամ մանկավարժական գոր-
ծերի մէջ, այլ որոնք չեն ճանաչում ոչ
մի կարգ լինի դա հին թէ նոր և հար-
ցերը վճռում են զանազան տրամադրու-
թիւնների և հաշիւների ազդեցութեան
տակ:

կանոններ ու հասարակական հիմնարկութիւն-
ներ, գրավաճառ ու գրականութեան մեկնաստ,
դաւառ ու մայրաքաղաք—բոլորն էլ ձեռք-ձեռ-
քի տուած ուղում են մայիսի 26-ին, որպէս
պատկ, բոլորն ազգի մեծանուն բերթողի ան-
ւան շուրջը: Եւ այդ ընդհանուր սէրը Պուշկինի
վերաբերմամբ միանգամայն հասկանալի է: Այդ
սէրը բանաստեղծին իր մարգարէական հոգով
նախադասել է դեռ կենդանութեան ժամա-
նակ.

И долго буду тѣмъ любезенъ я народу,
Что чувствую добрыя я лирой пробуждаю.

Ով ընդունակ է մարդկանց սրտերում դար-
թեցնել բարի զգացումներ, նա չէ մեռնում,
նա անմահ է, որպէս անմահ է և բարիի գաղա-
փարը: Սակայն Պուշկինը միայն բարիի զգա-
ցումներ չէ զարթեցրել իր ժողովրդի սրտում:
Անմահանալի է նրա երախտիւր ազգի վրա:
Նա իր ազգին տուել է լեզու, գեղարուեստական
այնպիսի ձօն, գողտրիկ և կենդանի լեզու, որ
մինչև այժմ համարվում է օրինակելի և որից,
որպէս անսպառ աղբիւրից, ամբողջ երբեք ըս-
տալի դար օգտվել ու յազդեցրել են իրանց ծա-
րաւը յետագայ շատ անուանի գրողներ ու բա-
նաստեղծներ: Նա բանաստեղծական վառ գոյ-
ներով և անաչառ զգացմունքով տուել է պատ-
կերներ իր ազգի անցեալ պատմական կեանքից
(«Բորիս Գոդունով», «Պոլտավա» և այլն): Նա
կենդանի նկարագրել է իր ժամանակակից
կեանքը, խորին դիտողութեամբ պատկերացրել
է այդ կեանքի մուսլ ու լուսաւոր, տխուր ու
ուրախ կողմերը («Էդգին» Օնեգին): Նա կեանք
ու շունչ է տուել ժողովրդական աւանդութիւն-
ներին, հէքերիներին ու առասպելներին. ժողո-
ւրդի երկակարութեան, ժողովրդի ստեղծագոր-

ծեմական դպրոցները որոշ դեր ունեն
կատարելու և ցաւալի է, որ այդ սակա-
ւաթիւ դպրոցները մինչև այժմ իրանց
բազմաթիւ կարիքներով մնացել են ան-
բաւարար վիճակի մէջ, զուրկ հաստատ,
որոշ և ապահով վարչական կեանքից,
շատ անգամ խաղալիք դառնալով կողմնակի
հանգամանքների ձեռքին: Ամօթ է, որ
այդ փոքրիկ գործն էլ չէ կարողացել մի-
շև այժմ աւելի բարեկարգ վիճակի ար-
ժանանալ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Մեր ընթերցող հասարակութեան շատ լա-
ւանթ երիտասարդ գրող պ. Ի. Ի. Վեսելովսկի
շարունակում է ծանօթացնել ուսու հասարա-
կութիւնը հայոց գրականութեան հետ, մի գործ,
որ ամբարն համակրելի է և որը նա տանում է
հաւանդով ու մեծ բարեխղճութեամբ: Շ. Սերբ.
ՅԵՃԱ. լրագրի մէջ (№ № 77 և 100) տպագրված
է պ. Վեսելովսկու մի ընդարձակ յօդուածը
Վերտի Պէշկովսկանի մասին: Յօդուածի վեր-
նագիրը՝ «Սիրոյ և եղբայրութեան քարոզիչը»
շատ լաւ ցոյց է տալիս թէ պարտն ուրախ լա-
ւանակացել է հայ բանաստեղծին: Ամենամեծ ար-
ժանաւորութիւնը, որ գտնում ենք պ. Վեսե-
լովսկու ուսումնասիրութիւնների մէջ, այն է, որ
նա շատ լաւ տեղեակ է մեր գրականութեան,
մեր հասարակական հանգամանքներին և այն
հոսանքներին, որոնց մէջ մեր այս կամ այն
գործիչը ցոյց է տուել իր գրական դէմքը:

Գրականութեան պատմագիրը—այսպէս է
սկսում պ. Վեսելովսկի իր յօդուածը—որ տե-
սութիւն է անում թէ ընդհանրապէս ամբողջ
գրականութեան և թէ մասնաւորապէս պօ-
զիայի մասին, սովորաբար հարկադրված է իր
ուշագրութիւնը դարձնել գրական գործիչ-
ների երկու տիպի վրա. դրանցից ոմանք
կոչված են լինել մարտնչողներ, բայց իրանց
ետեւից մասնաւոր նրան տաղան-
դի ոյժով և ջերմ, համուրջ խօսքով, հրաման-
ներ տալ նրան, ընդունելով ժողովրդական
տրեւոյնի դերը. միւսների գործունէութիւնը
արտայայտվում է այն բանի մէջ, որ նրանք
կարողանում են աղնուսանող աղբջութիւն

ծութեան այդ գանձերը, այդ գոհարները նա
իր սուր տաղանդով տաշելով ու յղկելով դարձ-
րել է ընդհանուր սեփականութիւն: Այն, ինչ
որ նրանից առաջ կամ նրա ժամանակ երդ-
վում ու պատմվում էր գիւղերի խորքերում,
գիւղական աղքատիկ խրճիթներում, նրանից
յետոյ՝ անցել է քաղաքներ, այսօր երգվում ու
պատմվում է թէ դպրոցներում, թէ բնակի-
ւրա, թէ ամենաւառն սալոններում («Բուսյան և
Լիւմիլա», «Ոսկի ձկնիկ», «Բուսյան», «Ոսկի
աքաղաղ» և այլն): Նա առաջինն է եղել, որ
միջբան բուռն խանդով երգել է իր ազգին ա-
մենաուրաջ զգացումներ, հոգու թրթռումներ,
սիրոյ վարդ ու փուռ և կարելի է ասել, ստեղ-
ծել է ուսական ընտանեկութիւնը: Ապրելով
զաժան և խստաբարոյ ժամանակներում, միշտ
նեղված, միշտ հալածված—նա անվեհեր հո-
գով և ազգու ընտանով քարոզել է շարունակ իր
ժողովրդին ազատութեան և ողորմածութեան
վրա՝ գաղափարներ:

...Въ мой жестокий вѣкъ возставлю я свободу
И мною въ падшімъ призвѣвалъ.

Նա տուել է իր ազգին հանրամարդկային
հոգեկան արտոնքի վառ նկարագիրներ. պատկե-
րացրել է ժառանգութիւնը, նախանձը—և այն
զարմանալի ուժով և հոգեբանական ճշգրտու-
թեամբ («Փլատ ասպետ», «Մոյսիս» և Սալի-
բի»: Մի խոսքով՝ մեծ է և բազմակողմանի
Պուշկինի ստեղծած ծառայութիւնը ուսու աղ-
գին. բարձր է և փայլուն նրա դերը մայրենի
գրականութեան պատմութեան մէջ, ուր նրա
անուան մինչև օրս էլ բռնում է ամենամեծ և
ամենալայն էջը:

Իրաւ է, Պուշկինը չը վաստակեց համաշխար-
հային պօէտի հոչակ. նա չանցաւ Հիւգօների ու

անել հասարակութեան վրա, նպաստում են
բարբերի մեղմացման, դառնում են խաղա-
ղութեան, սիրոյ և մարդասիրութեան եր-
գիչներ:

Պէշկովսկան այս վերջին տեսակ գոր-
ծիչների թիւին է պատկանում: Եւ պ. Վեսելովս-
կի այդ երկու ուղղութիւնները ընտրելու հա-
մար յիշում է, որ Բաքայէլ Պատկանեանի իրստ
մօտիւնների հետ գոյութիւն ունեն Մկրտիչ Պէ-
շկովսկանի շնորհ, մերթ մտախոհ, մերթ վըշ-
տալի, մերթ ընթող երգերը Հիւգիական ինկատի
ունի և այն հանգամանքը, որ 1862 թ.ին, Ձէյ-
թունում տեղի ունեցած դէպքերի տպաւորու-
թեան տակ, Պէշկովսկանին ընտրել էլ սկսեց
արձակել այն ձայններ, որոնք Պատկանեանի
ընտրել են յատուկ: Այդ հանգամանքը ցոյց է
տալիս, որ Պէշկովսկանին էլ հասարակական
միջնորոտով ապրող մարդ էր և Պարսաւի ան-
մատչելի բնակիչների թիւում չէր ուղում և չէր
կարող մնալ: Բայց դա, ի հարկէ, չէ կարող
կերպարանաւորել բանաստեղծի տաղանդը, որ
զխաւորապէս սէր և եղբայրութիւն գաղափար-
ների մէջ էր փայլում: Յիշատակելով որ հան-
գուցեալ բանաստեղծը իր այդ մեղծ, աղնուսա-
նող ձայնները ժառանգել էր Հ. Ալիշանից, որ
նրա ուսուցիչն էր, պ. Վեսելովսկի այսպէս է
դասաւորում այն շարժանքները, որոնք խօ-
սեցնել էին տալիս Պէշկովսկանին ընտրել. 1)
անկեղծ սէր դէպի իր ժողովրդին ու հայրենի-
քը: Նա սիրում է իր հայրենիքը, սրտին մօտ
է առնում նրա թշուառութիւնները. բայց այդ
սէրը, մեծ ժառանգ, չունի իր մէջ կատարու-
թեան, սպառնալիքների տարր. հայրենիքի ժա-
մանակակից դրութիւնը բանաստեղծին վշտահար
մտքեր է պատճառում, բայց անձեքներ չէ ծնեց-
նում: 2) Սէր դէպի բնութիւնը, որ նրա ողե-
ւորութեան անփոփոխ աղբիւրն էր: Նրա հա-
մար (և սա էլ Ալիշանի հետ ունեցած նմանու-
թեան մի դիմ է) ամբողջ աշխարհը ինչ է կեան-
քով. նա պատրաստ է խօսակցութիւններ սկսել
ժողովների, թուղանների, աստղերի, խոխոյն-
ցող առուակի հետ, յանձնել նրանց իր նուիրա-
կան խոհերը, մտաւորութիւնները, տեղանք-
ները, յոյսերը: 3) Կնոջ կուլտը: Վայս զգաց-
մունքը ներշնչում էր նրան շատ անկեղծ, կրա-
կուտ երգեր: Հիպոսունք, անխաղախ յափշտա-
կութիւն արտայայտող խօսքերով է նա երգում

Գեթիկների շարքը. նա տիրապետեց միայն իր
բազմաթիւն ժողովրդի սրտին, սակայն, սխալ-
ված չենք լինի, եթէ ասենք, որ նա արդէն
մօտենում էր համաշխարհայինների շարքը մշո-
նելու ճանապարհին: Եւ նա կը մտնէր, եթէ
աղետալի մար վերջ չը տար բանաստեղծի
կեանքին միջբան ջանքի հասակում: Յայտնի է,
որ նա ընկաւ գնտակից խոցված՝ մենամար-
տութեան ժամանակ. Պուշկինը մեռաւ 37 տա-
րեկան հասակում: Մի հասակ, երբ տաղանդն
իսկապէս նոր է մտնում իր ստեղծագործական
ոյժի ու կորովութեան շրջանը: Ինչ է 37 տա-
րին՝ համեմատած այն մասաւոր ու հոգեկան
անբաւ գանձերի հետ, որ արտադրել է բանաս-
տեղծի հզոր տաղանդը: Հապա ինչ կը լինէր,
եթէ այդ տաղանդը ստեղծագործէր մի 37 տա-
րի ևս. քրչափ հարստութիւն կը ժառանգէր
ազգը իր բերթողից, եթէ նրա բերթնաւոր ընա-
րը նչէր մի 36 տարի ևս: Այդ, ուսու ժողո-
ւորդը կորցրել է մեծ բանաստեղծ, բայց պէտք
է ասել, որ նա կորցրել է «սա առաւել մեծ
յոյս...», ինչպէս նկատում է ժամանակակից
անուանի կրիտիկոս Ն. Միխայլովսկի:

Ան ինչու այսօր Պուշկինի ծննդեան հարիւ-
րամեակը ստանում է համազգային տօնի բնա-
ւորութիւն՝ այդ խօսքի ամենալայն իմաստով
և Ռուսաստանը, ի երախտագիտական զգաց-
մունքով, պատրաստվում է արժանաւայել կեր-
պով տօնելու այդ տօնը:

Ի հարկէ, Մոսկւան նոյնպէս, որ բանաստեղ-
ծի օրրանն է եղած, այսօր մեծ պատրաստու-
թիւնների մէջ է: Բայց այդ մասին հետեւալ
նամակով:

Ա. Մատրեւեանց

իր սիրոյ առարկան... Հարուստ և պայծառ գոյներ, կենդանի պատկերացումով խոսք, անկեղծ զգացմունք, կրքոտ ոճը, միացած դարձանշաններ, գեղագիտական զգացման հետ—այս բոլորը կաշառում է մեզ, երբ մենք ծանօթանում ենք Պէշկովի հետ: Բանաստեղծը ունի մի հաղուսագիտ ընդունակութիւն, որով իր սիրային ոտանավորները մէջ միացնում է գոյների իստակ աբեղեան շքեղութիւնը կուրտուրական-երօպացու աշխարհայեցողութեան հետ: Բացի այդ երեք տեսակ գրութեանց Պէշկովի աշխատանքները մէջ յոգնածները, մարդկանց, ինչպէս եղբայրների, նայելով:

Ինչպէս վայել է անկողնապահ ուսումնասիրողին, պ. Վեսելովսկի, ի հարկէ, որոշում է բանաստեղծի գրութեան մէջ լաւ վատից: Վերջին տեսակի գործերի լուծում է դնում նա այն ձևերը, որոնք գրված են մի որ և է տօնախմբութեան կամ թղթման առիթով: Այնուհետև հեղինակը անցնում է Պէշկովի աշխատանքներին հասարակական գործունէութեան, նկարագրում է այն դերը, որ կատարեց նա Կ. Պոլսի թատերական գործերում, խոսում է նրա պատմական ողբերգութիւնների մասին, որոնք, ինչպէս յայտնի է, Պէշկովի աշխատանքների գրական փառքը չեն կազմում և վաղուց մոռացվել են: Հետաքրքրական է մանաւանդ այն դերը, որ կատարեց Պէշկովի աշխատանքներին հետևողները և հակահաստիքներին կուրտուրական մէջ: Այդ երկպառակութիւնների մէջ Պէշկովի աշխատանքները հարկաւորում էր հայտնութեան խոսքը, բարոյութիւն էր որ մարդիկ եղբայրներ են: Ուստի չէ յայտնի նրա ընդ առտեղովը դիմել կայ սիրուն գեղեցիկ երգը: Ինչը, Պէշկովի աշխատանքները, կարծիքի էր, բայց Կ. Պոլսի ամբողջ հայութեան սիրելին էր: Պակաս արդիւնաւոր չէր և բանաստեղծի մանկավարժական գործունէութիւնը: Նա մարդիկ լեզուի պաշտպան էր և պատարակում էր արտաբանութեան քաղաքակրթական պոստիւլներին, որոնք երօպացուականութեան առարկան նշան էին համարում խոսել ֆրանսերէն լեզուով: Այդ կատարող ֆրանսիստները մէկը, տիկին Վառնան, որ համարեա մի հատ բառ չէր հասկանում հայերէնը, Պէշկովի աշխատանքները կարգաւորում տակ դարձաւ բաւական յայտնի վերագործ, որ գրում էր Վերսալայ կեղծ անունով: Իր յօդուածը պ. Վեսելովսկի վերջացնում է հետևեալ խոսքերով:

Պէշկովի աշխատանքները մէկն էր այն գործերից, որոնք կոչված են լինել հայտնութեան, մարդկայնութեան, ազնւութեան մոռանալիքների նա սիրում էր իր ժողովուրդը և մի և նոյն ժամանակ հեռու մնաց չօվնիկներից: Դիմելով իր դասականութեան անվտանգ կողմնակից էր և յարգում էր միւս բոլոր դասականութիւնները, յարգանքով էր ֆրանսիստներին և արտաքին եւրոպականութեան դէմ, բայց դարձաւ համարում էր բոլոր արեւմտեան աղբերակներ, նրանց կուրտուրային և մոտաւորական կենսական տեսանկյունից: Իր շուրջը անկարգութիւն, մանր-մուշկ հայեր, լինումներ, բարքեր կուրտուրային— և հաւատում էր թէ խաղաղութիւն ու համարումութիւնը վերջնական յաղթութիւն կը տանեն: Նրա հայրենակիցները կարող են պարծնել նրանով, թէ նա մի առաջնակարգ, համարեալ բանաստեղծ չէր...

Գաղով հայրենակիցներին, մենք կասենք որ նրանք ոչ միայն չեն պարծնում նրանով, այլ և օրինակ չեն առնում աղպիսի գործիչին, չեն կատարում նրա բաղձանքները, իրանց համար իրենց չեն դարձնում այն սկզբունքները, որոնց նա էր խնդրում: Պատճառը: Պատճառը այն է, որ հայրենակիցները Պէշկովի աշխատանքներին էլ ճանաչում են ծոց տուէր մեր գրականութեան մէջ մի այնպիսի ուսումնասիրութիւն, որպիսին տուէր է պ. Վեսելովսկի ուսումնասիրութեան: Չենք ուրանում, որ Պէշկովի աշխատանքները շատ անգամ է խօսք եղել թէ Կ. Պոլսում, թէ մեզ մոտ: Բայց դա եղել է սանձարձակ շատագուրովութիւնների, ճառերի, ներդրումների խօսք: Իսկ մի ուսումնասիրութիւն, որ բաց անէր գործիչի սիրտը, հոգին, որ կապէր նրա գործունէութիւնը հասարակական կենսանքի հետ—այդպիսի բան չը կայ ոչ միայն Պէշկովի աշխատանքներին, այլ առհասարակ բոլոր հայ գործիչների վերաբերմամբ: Եւ ո՞վ պիտի անէ: Մեր գոյն ժամանակի վտիտ գործիչները օր ու գիշեր տընում են իրանց փառաբանելու, իրանց պատմութիւնը գրելու համար, իսկ այն, որ արդէն պատմութիւն է, որ անցեալ է ներկայացնում, արձանագրւած է, անյայտութեան դատապարտված...

ՊԱՏԵՐԱԶԱՆԳԷՍ

Թիֆլիսի զինուորական թանգարանում մարտի 28-ին բացվեց գեղարուեստական ցուցահանդէս, որ բաղկացած է Վովկանով գտնվող նկարիչների և քանդակագործների աշխատութիւններից: Մօտ տասն տարի սրանից առաջ սկիզբ դրվեց այդ ընդհանուր պատկերահանդէսին և կարելի է ասել իւրաքանչիւր երկու տարի մի անգամ տեղի է ունեցել մեր քաղաքում: Այդ գեղեցիկ գործի ճիշտագար գեղանքները կան պ. Բաշինյանի, Խոզորովի, Ջանկովսկի և ուրիշների, և տարիների ընթացքում նրանց շուրջ հաւաքվեցին նոր նոր ոյժեր և այսօր այդ ցուցահանդէսին մասնակցում են մօտ 15 հոգի գեղարուեստագէտներ և տասնի չափ էլ սիրողներ: Այդ երկույթը ուրախակալ էր համարել, մանաւանդ որ Թիֆլիսը այս բանի նկատմամբ ամբողջ ուսուց կայսրութեան մէջ եթէ ոչ հինգերորդ, անշուշտ վեցերորդ տեղն է բռնում:

Պատկերահանդէսները աստիճանաբար տարածելով հասարակութեան մէջ սէր դէպի ներկայութիւն և այսօր երկու սեռին պատկանող բազմաթիւ անձնք պարագլուս են գեղարուեստի այդ ճիւղով: Մի և նոյն ժամանակ տեղի վեց մի դասակարգ, որ հետաքրքրութեամբ այցելում է պատկերահանդէսները և հետևում է նկարիչների առաջադիմութեան և զարգացման: Երբ մօտ 15 տարի սրանից առաջ պ. Գ. Բաշինյանը առաջին անգամ բաց արեց իր նկարների ցուցահանդէսը, տեղական հասարակութիւնը (բացի մի բանի տասնեակ անձերից) համարեա չէր այցելում, չէր նայած, որ մուտք ձրի էր: Եւ հասկանալի է, բանի որ այդ բանը միանգամայն նոր էր: Տեղական մասուր նոյնպէս անտարբեր վերաբերվեց: Միմիայն հանգուցեալ Գ. Արծրունի «Մշակ» մէջ ուրախութիւն յայտնեց և յորդորեց կարգաց հասարակութեան:

15 տարից յետոյ մենք ժամանակները փոխված ենք տեսնում, այժմ մուտքը ձրի է և այցելուների թիւը մի բանի հազարի է հասնում: Ով դեռ չէ այցելել այդ պատկերահանդէսը, խորհուրդ ենք տալիս շտապելու, քանի որ, ինչպէս լինել, մայիսի սկզբներին փակվելու է: Ներկայ պատկերահանդէսի մասին մենք դեռ կը խօսենք մանրամասն:

«ՔԱՆԱԿԱՆ ՄԵՌԵՆԵՐ»

Փրիստոյ յարեալ ի մեռելոց... Գրելով այս խօսքերը, որ տասն ինը դար աւանդաբար մեր պապերն ասել են միմեանց, ես կհամայն յիշում եմ այն մեռելներին, որոնց մասին մեր բանաստեղծ Գառնա-Գալիպան զգրել է մի փոքր, բայց զգացված պատմութեամբ: Եւ ճշմարտան առած, եթէ լաւ նայես չորսը, որպիսի կան մեզանում զբաղակա մեռելներ, որ մեռել են դեռ աշխարհ չեկած, որ ոչ մի կապ չունենալով կենքի հետ, անտարբեր, սառն են նայում առօրեայ չարին և բարին, միայն պաշտելով իրանց լուսնագին ետը: Նրանք ապրում են լոկ անուշ տոնելու, անուշ խմելու և անուշ քնելու համար: Օրորոցից սովոր են ստին և ամբողջ կենսանքերը ստում են, կեղծում: Սուտն է նրանց նպատակը, սուտն է նրանց կուրքը: Անուշ թէ համալսարանաւարտ, նրանք դնում են միայն մի ճանապարհով, որի վրա չը կայ ոչ փող, ոչ տատակ, գնում են խաղաղ, պարզեւս, ոչ ոքի դէմ չը մաքառելով, ատելով աշխիւ մաքառում: Օմիտ, կուշտ հաց—հաց նրանց երազները...

Այդպիսի զբաղակա մեռելներին համար չէ «Փրիստոյ յարեալ» և նրանք երբեք չեն գրվել նի անդորր քնից, որ մահից ծանր է և խորը: Բայց քանի որ դրի չէմք ժամանակ է մը տաճելու և քաղական մեռելների մասին, մանաւանդ համալսարանաւարտ Կովտ, անուշ, իմարտաբար փորձողութիւնը և ոչնչութիւնը հասկանալի են շատ և մասամբ իսկ ներքին: Բայց արի տես, որ մեզանում նոյն փորձողութիւնը, նոյն ոչնչութիւնը չէ խնայում և բարձր ինտելիգենտ դասակարգը: Կոտելիգենտը մոռանում է, որ ու շատ է տրված, նրանից շատ է պահանջում: Հազար հազ համալսարանի աւարտած, նա չէ շտապում գիւղը օգնելու փոքր եղբայրներին, որ կորած են խաւարի մէջ, որ կարող են նրա օգնութեան. նա շտապում է քաղաք, իր քէֆի վրա միայն մտածելով և որովհետեւ այն աստուածային կրակը, որի անուշ տաճան է, չէ վառված նրա սրտում, իսկ քաղաքային կենքի պայմանները ծանր են, նրա պահանջները մեծ, նա ստորանում է, խոնարհվում է, փորձաբար սողում հարուստի, ուժեղի առաջ,

մոռանալով ամօթը, վաճառելով խիղճը: Այն աշխիւ սուրբ գաղափարը, որը երբեմն նրա միայն Աստուածն էր, նա ցեխի հետ է հաւատարմում, ցեխի մէջ աշխատում տրորել, կոխել, խեղդել, որպէս զի նա չը բարձրացնէ իր գլուխը, որպէս զի չը խօսէ, չը բողբոջէ, չը կանչէ նման այն քարերին, որոնց մասին այնպէս գեղեցիկ գրում է Աւետարանը...

Բայց չէ որ գաղափարը անձա՛ն է. նրան կարելի է կեղտոտել, մրտել, խեղդել: «Քաղաքական մեռելներին» յաղթութիւնը ժամանակաւոր է, գաղափարը նոյն գեղեցիկութեամբ, նոյն փայլով և աւելի ուժեղ կը կանգնի մեր առաջ և նա կը տանի մեզ առաջ, եթէ մենք չենք համարձակում նրան հետևել: Արեւմտ չը վաճառեք երբեք, մեր շուրջը տեսնելով անտարբեր, սառնասիրտ զբաղակա մեռելներ և հաւատանք միշտ, որ եթէ նրանք չեն սթափվի, զարմնի ծանր քնից, դո՛ւք նրանք վերջ ի վերջոյ կեցիք, կը հանդուստանան իրանց տեղը՝ գերեզմանոցում, որովհետեւ նրանց համար չէ ոչ «Փրիստոյ յարեալ» և ոչ էլ աշխարհի լայն ասպարէզը:

Աշխարհը մշակների և մաքառողների համար է. եթէ միմեան ընկճված լալիս է, միւսը պիտի փարատէ նրա վիշտը և սրբէ եղբոր արտասուքները: Իսկ նա, որ ինքը չէ լալիս, չը գիտէ լալ և չէ էլ սրբում և չը գիտէ սրբել ուրիշի արտասուքները, նա, որի սիրտը չեն այրում եղբոր աղի արտասուքները, —նա իրաւունք չունի ապրելու, նա աւելորդ է այս աշխարհում, նա զբաղակա մեռել է, որի տեղը՝ քաղաքից դուրս, խաղաղ գերեզմանոցն է...

Գ. Չախուչեան

Նոր-Նախիջևան.

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐՈՒՐԳԻՑ

Ապրիլի 13-ին

Ամենագոյնի գործն այն է, երբ մարդիկ գիտակցաբար, անխղճօրէն ոտնակոխ են անում անհատի իրաւունքներին, իրանց գոյն նպատակներին հասնելու դիտաւորութեամբ: Այդ տեսակ մարդիկ առհասարակ արժանի են արհամարհանքի: Իսկ երբ ամբողջ դասակարգի իրաւունքներն են ոտնակոխ լինում գիտակցօրէն, այն էլ մի հաստատութեան կողմից, որ իր գոյութիւնը ընտրողական սկզբունքով է պահպանում, մենք չենք գտնում խօսք թէ՛ այդ հաստատութեան ղեկավարներին ինչ անուն տանք:

Անցեալ տարվանից այստեղի եկեղեցական-ծխական ժողովի ղեկը, բաղդի բերմամբ, Սեօվի և նրա համախոհների ձեռքն անցաւ: Համաձայն կանոնադրութեան, այս տարի հերթով պաշտօնից դուրս էին գալիս երկու անգամ և դրանց փոխարէն նորերը պիտի ընտրվէին երեք տարի ժամանակով: Դուրս եկողներից մէկը Սեօվի-Շահն էր, միւսը՝ Ե. Զաւրիկ: Ներկայ վարչութեան կողմնակիցները, լաւ զգալով որ բացի մի խումբ կարիքիւստ-չինովներէից, ամբողջ հայ դատութիւնը պատրաստվում է այս տարվայ ընտրութիւնների ժամանակ հերթով դուրս եկող անգամների փոխարէն նորերին ընտրել, այն էլ այն տեսակ նորերին, որոնք իրանց հայացքներով տարբերվում են այժմեան վարիչներից, զիմեցին հետևեալ միջոցին, որ պատրւ չէ բերում թէ հեղինակներին և թէ խրախուսողներին:

Ժողովի անդամներից Սեօվի-Շահն և Բագրամով, գաղտնի կերպով, ծխականներից ծածուկ մի խնդրեց են պատրաստում, իրանց բարեկամներից և ստորադրեալներից 30 ստորագրութիւն են որոտում և դիմում են այդ խնդրելով ծխական ժողովին, խնդրելով որ այս տարվայ ընդհանուր ժողովը նշանակվի ցեղեկվայ ժամի 1-ին և ոչ երեկոյեան ժամի 8-ին, ինչպէս սովորաբար մինչև այժմ եղել է: Անշուշտ խնդրատուները լաւ գիտէին, որ վաճառական դասակարգի մեծ մասը կը բացակայէ, իսկ գործակաւարները բոլորովին իրաւագործ պիտի մնան այդ դէպքում, քանի որ ժողովի բացման ժամը ամենատուր ժամանակ լինելով, անտուրները չեն փակի: Ժողովը յարգում է այդ 30 մարդուց ստորագրած խնդրը: Զարմանալի բան կը լինէր՝ եթէ չը յարգէր, խնդրել տուող ու վճարող չէ որ իրանք էին:

Ժողովը երբ իմացաւ Սեօվի-Շահն և Բագրամովի կերպը, 60 մարդու ստորագրութեամբ մի խնդրեցով դիմեց ժողովին, խնդրելով, որ ինչպէս տարիների ընթացքում, ժողովի խնդրելով, ծխական ժողովը վճարէ և ընդհանուր ժողովներ նշանակել միշտ երեկոյեան ժամի 8-ին, իրեն ամենապարզապէս ժամանակ ծխականների մեծամասնութեան համար, թող այսուհետ էլ չը խախտվի այդ արդարացի վճիռը և խնդրում է այս տարվայ ժողովներն էլ նշանակել սովորական ժամին: Ծխականների այդ արդարացի

խնդրերը մերժեց ծխական ժողովի կողմից: Այդտեղ էլ զարմանալու բան չը կայ... Հասաւ ապրիլի 4-ը: Ժամի 1-ին՝ նշանակված տեղը հաւաքվեցին ծխականներից մօտ 80 մարդ: Ծխական ժողովի կողմնակիցները ցանկացան ուղղակի ընտրութիւնից սկսել, բայց բողբոջողները մի խումբ պահանջեց, որ այդ օրվայ ընտրութիւնները յետաձգվեն մի այլ անգամի, քանի որ ծխական ժողովի անդամները՝ Սեօվի-Շահն և Բագրամովի կողմից մի անպատուաբեր գործ է կատարվել, որով ծխականների մեծամասնութեան իրաւունքները ոտնակոխ են եղել և այդ գործը ծխական ժողովի կողմից էլ խրախուսանք է արժանացել:

Այդտեղից սկսվեց կռիւն ու զայալալալ: Բայց ինչպէս երևում էր, ծխական ժողովի կողմնակիցները վճարէ էին անպատուաբեր գործը ընտրութիւնը գլուխ բերել. հակառակ դէպքում իրանց գործը տարված էր: Աստի դիմեցին ոտնակոխութեան և խնդրեցին, որ իրանց ոչ ցանկալի անձնակազմութիւններին հեռացնեն ժողովից: Պ. ոտնակոխացեալ, ոչ մի հիմք չը գտնելով մի որ և ինչ անձնակազմութեան հեռացնելու ժողովից, մերժեց պարոնների խնդրերը:

Ժողովի զարկով չափ ու օսանանից անցաւ, էլ անվայել խօսք չը մնաց, որ այդ բաժանագործ պարոններին չուղղէին, բայց դրանք շատախոհեցին իրանց ընտրութիւնները: Ընտրութիւններին մասնակցեցին ընդամենը 56 մարդ, մնացածները ձեռնպահ մնացին: Մի փոքր ինքնասիրութիւն ունեցող թեկնածուները հրաժարվեցին ընտրվելուց: Գործն այնտեղ հասաւ, որ մասնաւոր կերպով դիմում էին մարդկանց, որ համաձայնվեն ընտրվելու, թէպէտ այդ արդէն օրէնքից դուրս բան էր:

Միայն պ. Կարակաշ համաձայնվեց դնել իր թեկնածութիւնը: Ընտրվեցին պ. Բուրազով և Կարակաշ:

Շատ ծանր տպաւորութիւն գործեց մեզ վրա այն տարվայ ընդհանուր ժողովը:

ՆԱՄԱԿ ԶԻՎԱՆՇԻՐԻ ԳԱՒԱՌՈՑ

Մաղապից, ապրիլի 5-ին

Հանեալթաղի պետական ծխարուծական օրինակելի արտադրութիւն (Государственная заводская конюшня) Ոսկանապատ, իսկ այնտեղից Թիֆլիս փոխադրելուց յետոյ, Հանեալթաղի և Ենար-Ների գեղեցիկ խոտատեղերը պարագլ էին մնացել և մի բանի տարի շարունակ այդ ազատ հողերը կապալով էին տրվում Հանեալթաղին՝ նոյնատեսակի գիւղի բնակիչներին, իսկ Ենար-Ներին՝ Մեծ-Շէն և Մաղապից գիւղի բնակիչներին: Ինչպէս յայտնի է, այդ հողերը հիմա յատկացրած են ուսուց գաղթականներին: Երկու ուսուց գիւղ է հիմնադրում—մէկը Հանեալթաղում, նոյնանուն հայ գիւղի մօտ, ուր մինչև հիմա էլ մնում են ընդարձակ գոմերը և այլ պետական շինութիւնները, իսկ միւսը՝ Թարթառում, որ մեր գաւառի վարչական կենտրոնն է և որտեղ բացի ծառայողներից ու աւետարականներից՝ առաջ ապրիլի կերպով թուրքեր էին ապրում: Թարթառի ջրաբեր հողից՝ պէտք է, ամառը բարձրանալով Ենար-Ների, օգտվեն և այդ արդաւանդ հողով, որ գտնվում է մեր գիւղի մօտ, Թարթառից դէպի արեւմուտը գտնվող սարերի ստորոտներում, մօտ 22—25 վերստ հեռավորութեան վրա: Մօտ ժամանակներս Գանձակի նահանգապետ գեներալ-մայոր Վրէժով այցելեց մեր գիւղը և Ենար-Ների հողը յանձնեց ուսուց գաղթականներին: Բայց դրանից՝ պարոն նահանգապետը առաջարկեց, որ երեք հայ գիւղի, այն էլ Մաղապից, Մեծ-Շէնի և Հանեալթաղի գիւղացիները՝ կապալով վերցրած Ենար-Ների և Հանեալթաղի ազատ հողերում անցեալ աշնան ցանած իրանց արտերի այս տարվայ բերքը կրեն նորեկ ուսուց գաղթականներին հետ: Հայ գիւղացիները սիրով համաձայնվեցին: Պէտք է նկատած, որ մեր գիւղացիները այս տարվայ ցանքի մեծ մասը գտնվում է գիւղացիների ձեռքով թփերից, մացառներից մաքրած, մշակած այդ հողերի խամհատներում, և դրանով մեծ վտանգ է նկատվում նրանց սեփական ապահովութիւնը: Ահա օրինակելի գոհողութիւն, պերճախօս փաստ, որ ընդունակ է համոզելու, լռեցնելու ամեն մի ազնիւ թշնամու, բայց, ի հարկէ, ոչ զանազան մարդակերներին:

Զարեգրի հայ գիւղացին առհասարակ սիրով ողորձում է և զբարի գալուստ մաղթում ուսուց գաղթականներին: Գուցէ քրիստոնեայ տարրի աւելանալով կարելի լինի մեր բազմաթիւ գաւառում վերջ տալ քրոնիկական գողութեանը և աւաղակութեանը. դուցէ մեր թմբած կենսաբան գիւղատնտեսութեան և տնայնագործական

միան Անգլիայի շահերն ու պատեր, ահա այն ամենամեծ նպատակը, որը պետք է ի նկատի ունենայ մինիստրը: Այդ կարողա- նայ արդե՞ք կոնֆերանցի ազդել սպառա- ղինության սահմանափակման ու ազդերի մեջ յարաբերությունների բարեփոխման վրա, իրան յայտնի չէ, բայց այն փաստը, որ կոնֆերան- ցիայի հարցը զարթոնքի է մի այնպիսի ազգ, որը իր միջոցների կողմից զորեղագույն ազդն է աշխարհիս երեսին, անկասկած, լուս. նշան է ա- պագայի համար:

ՊԱՐԻՑ: «Temps» լրագրում տպված է հետե- լեալ հաղորդագրությունը. «Այսօր ժամանակ- ներս «Times» լրագրում հրատարակված էր ֆի- նանսների մինիստր Վիտտելի գաղտնի զեկուցու- լը, որը վերաբերում էր Ռուսաստանի և Անգ- լիայի առևտրական յարաբերություններին, և այն միջոցներին, որոնց պետք է դիմել նրանց զարգացնելու համար: Պարիզի ռուսաց մինիստ- րության ֆինանսական գործակալ Արտուր Բա- ֆայովը յայտնում է մեզ, որ Պետերբուրգից, ամենահաստատ աղբյուրներից, ստացած տեղե- կությունները հաստատում են, որ այդպիսի զե- կուցում տեղի չունի, հետևաբար և «Times»-ի հաղորդած լուրերը զուրկ են որ և է հիմունք- ներից:

ՀԱՍՏԱ: Օրանեն Huisten Bosch ամբողջի դահլիճում, որը յատկացրած է կոնֆերանցիայի նկատմամբ, պատրաստվում է 100 տեղ: Բացի դրանից, պատրաստվում են տեղեր 10 բար- տուղաների համար, որոնք կը նշանակվեն մա- սամբ դեսպանատան քարտուղաներից և մասամբ նիդերլանդական պաշտոնյաներից: Համարեա յայտնի է, որ կոնֆերանցիայի նիստերը զարդանի կը լինեն, բայց մասովը տեղեկություններ կը ստանայ: Ռուսաց դեսպան Ստալին սպասում են այստեղ մայիսի 2-ին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Ապրիլի 21-ին թագաւոր Վալս- րը և թագուհի Վալսրուհի Ալեքսանդրա Ֆելոգո- րովնան Օդեստայի օդակայանից ուղևոր- վելին Ցարսկոե Սելո: Ապրիլի 20-ին թագաւոր Վալսրը Վալսերական տան անդամների հետ ներկայ էր Մարիյնսկի թատրոնում ձերբացած զինուորների օգտին տրվող նուագահանդէ- սին:

Ապրիլի 21-ին Սթոնիայի Գորոզովս անուա- նած տեղում, ներկայութեամբ Մեծ Իշխան Վլա- դիմիր Ալեքսանդրովիչի և Օդեստայի Ամուս- նու ու Աղջկայ, զիպոստատական մարմնի ներ- կայացուցիչների և ուրիշ շատ բարձրաստիճան անձանց, տեղի ունեցաւ արհեստագիտական ցուցահանդէսի բացումը:

Ապրիլի 21-ին Բերլինի օրկեստրի ներկայա- ցուցիչները յանձնեցին ռուսաց Վալսերական երաժշտական ընկերութեան երեք չեղ պատկ, խնդրելով, որ այդ պատկները դնեն Գլինկայի, Չայկովսկու և Բուրնշտեյնի գերեզմանների վրա:

22 ապրիլի

ՊԱՐԻՑ: «Temps» լրագրում ասում է, որ վրձ- ռաջինջ ատենանի ձեռքում գտնվում է զինու- րական մինիստրի չրջաբերականը, մայիսի 17-ից 1894 թ., որը զգուշացնում է, թէ զլխաւոր շտաբի օֆիցերները չը պէտք է մասնակցեն այս տարվայ լինելից զօրախաղին: Ուրեմն Դրեյ- ֆուս չէր կարող բորդերի մեջ գրել օգոստոս- սին, թէ ճանապարհ է ընկնում դէպի զօրա- խաղը:

ՇԵՐԲՈՐԳ: Անգլիական թագուհին, վատ ե- ղանակի պատճառով, յետաձգեց իր մեկնումը:

ՊԱՐԻՑ: «Echo de Paris» լրագրում լսել է Լէրբէյից, որ վերջնական վճիռը սպասվում է մայիսի 20-ին:

«Journal» լրագրում, հերքելով «Herald»-ին, ասում է, որ Ֆրանսիայի և Սիւմի մեջ բա- նակցությունները չարունակվում են:

23 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Թագաւոր Վալսրի հրամանով, Վալսրի թաչի զլխաւոր վարչութեան գրամարկ- ղը մտցված է մէկ միլիոն հինգ հարիւր հա- զար բուրլի ռուսեղէն միլիոններ և բժշկական օդնութիւն հասցնելու 7 արեւելեան նահանգների ազգաբնակչութեանը:

ՄԱԳԻԴԻ: Թագուհի-խնամակալուհին ստո- րագրեց հրովարտակ, որով 5 միլիոն է յառ- կացվում Կանադեան կղզիների պաշտպանու- թեան գործին:

«Riforma» լրագրի տեղեկություններին համե- մատ, Պոլավիէսա յայտնեց, որ զինուորական մինիստրութեան բուլդէտը մեծացրված է 28 միլիոնով: Կառավարվի արտակարգ բուլդէտի նախագիծ՝ զինուորականները վերականգնելու և

արագաձիգ թնդանութներ ձեռք բերելու համար: Պոլավիէսա աւելացրեց, որ այդ ծախսերը ան- խուսափելի են:

ԽՈՐԱԳԻՐ: ԱԼԷԳՍՍԵՆԻՐ ԳԱԼԱՆԹԱՐ Հրատարակչին: ԹԱԳՈՒՆԻ ՏԵԳՐԱՆՆԱՆ ԻՍՈՒՆԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ Զ. Յ. ՂՕԿԵԼԵՆՆ

Ընդունում է՝ վնասական, անտակաւ, մոր- թու և ներքին հիւանդութիւն ունեցողներին:

Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը:

Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31:
(Կ. Տ. Ն.) 26—100

Կողկասեան նկարչներ

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԵՍ

Բաց է զինուորական թանգարանում (Փառ- քի տաճար) առաւօտեան ժամի 10-ից մինչև ժամի 6-ը կէսօրից յետոյ,

1—3

Լ յ յ ա տ ե ս ա լ

Վ. ՓԱՓԱՋԵԱՆԻ

ՀԱՅ-ԲՈՇԱՆՆԵՐ

(Ազգագրական ուսումնասիրութիւն)

Գրին է 50 կող:

Ծախվում է Կենտրոնական դրամաճառանոցում և հեղինակի մօտ:

1—5



ԱՄԵՆԱՅԱՅՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



Ր Օ Յ Ե Ա Լ Ն Ե Ր



Դ Ա Շ Ն Ա Մ ՈՒ Ր Ն Ե Ր



ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻ- ԹԱՌՆԵՐ, ՖԼԵՏՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՉԱՅ- ՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ:



Բոլոր տեսակ գործիքների համար գի- նը կարելի է վճարել մաս-մաս:

Ն ՈՐ - Պ Ր Ե Յ Ս Կ ՈՒ Ր Ա Ն Տ Ն

ուղարկվում է ձրի:

ԵՐԱԺՇԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՉԱՅՆԱ- ԽԱՋԵՐԻ ԿՈՎԱՍՏԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Դ Ե Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆՆԱՆԻ

Մատակարար Կայսերական երաժշտական Ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманиан, ТИФЛИСЬ.

Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

(Ն.) 6—20

Ե Ի Լ Ա Խ - Ծ Ո Ւ Ծ Ի

ՏԱՍՆ ԺԱՄՎԱՅ ՃԱՆԱՊԱՐՀ

Զալիեվի դիլիջանները դուրս են գնում Կանսոնաւոր կերպով Նւլախից Շուշի դիլիջանայ ժամի 12-ին և առաւօտեան ժամի 6-ին, իսկ Շուշուց Նւլախ՝ առաւօտեան ժամի 5-ին: Նւլախում հա- դատանալու համար առաջարկում են մաքուր սենեակներ ամեն յարմարութիւններով: հարցնել Զալիեվի հիւրանոցը, Շուշու ճանապարհի վրա:

1—5

(Ն. Կ. Ն.)

Ա. Զալիեվ

Թիֆլիսի ժողովարանի դահլիճում

Այսօր, շաբաթ, ամսի 24-ին, լինելու է յայտնի դաշնակահար

Ի Օ Ս Ի Ֆ Ս Լ Ի Վ Ի Ն Ս Կ Ո Ւ

Կ Օ Ն Ց Է Ր Տ Ը

Սկիզբն է ժամի 9-ին երեկոյեան: Տոմսակները կարելի է ստանալ Բ. Միրիմանեանի խա- նութում, Դվորցովայա փողոց:

1—1

ՖԻՐՄԱՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ 1891 ԹԻՒՑ

Ս. Գ. ՏԵՐ-ՅՈՎԻԱՆԻ Ե Ա Ն Ե Ա Ն Գ Ի

Խ Ա Ն Ո Ւ Թ Ո Ւ Մ,

որը գտնվում է Երևանեան հրապարակի վրա, Դվորցովայա նոսրերի մոտքի կողքին,

Ա Պ Ր Ի Լ Ի 1-Ի Ց

Վաճառվում են է ժ Ա Ն գնեցող ամենաընտիր տեսակների

Մ Ս Հ Ո Ւ Գ Ե Վ Է Ն Ն Ե Ր

Ստացված ՖԻՐՄԱՆԱՅԻ և ԱՆՊԼԻԱՅԻ յայտնի գործարաններից:

Պատուէրները կատարվում են, ինչպէս և առաջ, հմուտ և ճշգրիտ հսկողութեամբ:

Գները է ժամանակեան և ապրանքի լաւութեան մասին պ. պ. գնողները կա- րող են համոզել անձամբ, յաճախելով մեր խանութը:

(Կ. Ն.)

4—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖԻՐՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանսոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու չաբա- թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից,

Եւ հալաւակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պոլս: Մեկնում է Բաթու- մից՝ չորեքշաբթի, 28 ապրիլի (10 մայիսի) ԱՆԱՏՈԼԻ չորեքշաբթի, նաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գնեցողով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:

ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր ԴՄԻՏԻՆ, Նաբէրէժնայա: **ԹԻՖԼԻՍԻՄ**—պ. Օ. Գ. Բարեկենդա

նեանին, Սիւնի փող. Թօշախարուխովի և Մայսուրաձէ բարձրաստրա: **ԲԱԳՈՒ**—պ. Ս. Դիլարեանին

Կօրնքակինսնայա հրապարակ: **ՆՈՎՈՐՈՍՍԻՑԱ**—պ. Միխիլ Զերէնբորգին:

(Կ. Ն.)

5—20

ԷԺԱՆ, ԼՆԻ ԵՒ ԺԱՅԱԿՈՎ

ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գօրով. պրոսպէկտ, Լ-ին դիմնապիայի հանդէպ:

Ստացված է մեծ քանակութեամբ տղամարդկանց և երեխանե- րի զարնանային և ամառվայ պատրաստի հագուստներ: Գները է- ժանութեան և ապրանքի լաւութեան մասին պ. պ. գնողները կա- րող են համոզվել, անձամբ յաճախելով մեր խանութը:

10—10

Վաճառվում է, Մօսկվայում տպված,

Ս Ո Ւ Ա Կ Հ Ա Յ Ա Տ Ա Ն Ի

ազգային լիակատար ԵՐԳԱՐԱՆԻ առաջին հատորը, չորրորդ տպագրութեամբ, բաղկացած 402 մեծադիր երեսներից, 300-ից աւելի գործածական երգերով, բանաստեղծութիւն- ներով և երգերին վերաբերեալ արձակ գրութեաններով: Բարձրանշիւր օրինակի գինն է 1 ռ., ճանապարհածախքով—1 ռ. 20 կ.: 10 օրինակ գիրք պահանջող ճանապարհածախք չէ վճարու- ծի մանկացողները, յայտնելով իրանց ճիշտ հասցէն՝ դիմում են Բ ա գ ու, «Սոխակի» հրատարակիչ

Գրիգոր աւագ քահանայ Գրիգորեանցին, սոյն հասցէով. Протоіерей Григорію Григоріанцъ, въ Баку.

(Ն. Ն. Կ.)

3—10

